# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №: 2

## 02.03.2021 Թ. ԿՆՔՎԱԾ N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/4-1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «09» « 04 » 2021 թ.

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Մարկոսյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.03.2021 թ կնքված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/4-1 պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն N: 1 Հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի N: 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ | «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ |
| Երևան, Վարդանանց փակուղի 8 | ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 9/20 |
| Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621 | հ/հ 163548004296, ՀՎՀՀ 00455925 |
| Տնօրեն | Տնօրեն |
| ---------------------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ | ---------------------- Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված № 1*
*02 մարտի 2021 թ. կնքված*
*ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/4-1 պայմանագրի*
*№ 2 համաձայնագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չ/մ | միավոր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 45221700/501 | Ազատի քառաստիճան պոմպակայանների և Ակնալճի պոմպակայանի էլեկտրասարքավորումների, հսկիչ-բաշխիչ սարքերի ստուգում, կարգաբերում.<br>- 2 հատ 2500 կՎԱ, 2 հատ 1600 կՎԱ, 2 հատ 110 կՎԱ ուժային տրանսֆորմատորների, լարման տրանսֆորմատորների փաթույթների մեկուսացման դիմադրության, օհմական դիմադրության չափում, տրանսֆորմատորի յուղի ավելացում<br>- Տրանսֆորմատորների յուղի ծակման լարման որոշում<br>- Տրանսֆորմատորների յուղի մեջ ջրի առկայության որոշում<br>- 14 հատ յուղային անջատիչների ստուգում, կարգաբերում, վերանորոգում, յուղի լրալցում, փոխում<br>- 14 հատ լարման մինիմալ պաշտպանության ստուգում<br>- 14 հատ հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում<br>- 8 հատ օպերատիվ շղթաների բաժանիչների ստուգում<br>- 14 հատ էլեկտրական մեքենաների փաթույթների մեկուսացման խոնավության որոշում<br>- 8 հատ երկրորդային շղթաների կոմուտացիայի ստուգում և կարգաբերում<br>- 6 հատ մինչև 11 կվ շինաների փորձարկում բարձր լարումով<br>- 14 հատ 6000 վ լարման սնուցող մալուխների մեկուսացման դիմադրության ստուգում և փորձարկում բարձր լարումով, շարժիչների պարապ ընթացքի ռեժիմում | հատ | 30000000 | 3000000 | 1 | Արարատ, Կոտայքի և Արմավիրի մարզեր | մինչև 2021 թ. ապրիլի 23-ը |
| 2 | 45221700/502 | Մխչյանի պոմպակայանների էլեկտրասարքավորումների, հսկիչ-բաշխիչ սարքերի ստուգում, կարգաբերում.<br>- 630 կՎԱ, 100 ԿՎԱ ուժային տրանսֆորմատորների փաթույթների մեկուսացման դիմադրության ստուգում, մտնող և | հատ | 2400000 | 2400000 | | Արարատի մարզ | մինչև 2021 թ. ապրիլի 23-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դուրս եկող մալուխների մեկուսացման դիմադրության որոշում<br>- Տրանսֆորմատորների յուղի ծակման լարման որոշում<br>- Տրանսֆորմատորների յուղի մեջ ջրի առկայության որոշում<br>- 6 հատ 250-630 ԿՎԱ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների չափում<br>- 15 հատ լարման մինիմալ պաշտպանության ստուգում<br>- 15 հատ հոսանքի մաքսիմալ պաշտպանության ստուգում<br>- 3 հատ օպերատիվ շղթայի բաժանիչների ստուգում<br>- 15 հատ էլեկտրական մեքենաների փաթույթների մեկուսացման խոնավության որոշում ;<br>- 5 հատ երկրորդային շղթաների կոմուտացում, ստուգում և կարգաբերում<br>- 5 հատ հողանցման էլեմենտների և հողանցիչների միջև շղթաների առկայության ստուգում<br>- 15 հատ մալուխների փործարկում բարձր լարումով, շարժիչների պարապ ընթացքի ռեժիմում;<br>- 10 հատ ТВУ-ների հիմնական սպասարկում (մալուխների, կոնտակտորների, պլատաների մաքրում, նորոգում և ամրացում) | | | | | | | |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
հ/հ 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

------------------------------ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 9/20
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 163548004296, ՀՎՀՀ 00455925
Տնօրեն

------------------------------ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.